



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

25.10.2012թ.

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգարժան գորակոչիկներ

Հայրենիքին ծառայելու ամենապատասխանատու և պատվաբեր գործընթացի սկիզբն ազդարարող այս տոնական օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում և ամենայն բարիք եմ մաղթում բոլորիդ:


Բանակում ծառայելը համարվում է ամենանվիրական առաքելություններից մեկն ու իր յուրօրինակ ազդակներն է հաղորդում անհատի ձևավորման և կայացման բոլոր իրողություններին:

Վստահ եմ, որ գիտակցում եք Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում ծառայելու բոլոր կարևորություններն ու գերակայությունները և կանեք առավելագույնը մեր հայրենիքի խաղաղությունը, սահմանների ամրությունն ու անսասանությունը պահպանելու գործում:

Բարեմաղթում եմ, որ Ձեր ծառայությունն ընթանա դրական զարգացումներով և լինեք հայ զինվորի վեհ նկարագրի արժանի կրողն ու շարունակողը:

Թո՛ղ որ, մեր հայրենիքի ապագային մաս կազմեն միմիայն հաղթական հաջողությունները:

Հարգանքներով

 **Վ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**